ցել է «ի շարադրութիւնս Հայրապետաց»։ Այսպէս ուրեմն Ս. Աջը գերութիւնից վերադարձել է Սիս, ուր մնաց նա մինչև Հայրապետական աթոռի փոխադրութիւնը Սսից Վաղարշապատ 1441 թուին։ Այն ժամանակ, երբ Սսոյ աթոռն սկսեց հետզհետէ նսեմանալ և իւր աղդեցութիւնը կորցնել, նոյն իսկ Սսի կաթուղիկոսարանումն էլ շարունակ տեղի էին ունենում շփոթութիւններ։ ԺԵ. դարում այդպիսի շփոթութիւնների ժամանակ յայտնւում էր, որ Ս. Աջը գողացուած է Սսից։ 1439 թուի երկու յիշատակարաններ որոշ յայտնումեն այդ։ Առաջինն ասում է «գողացան զԼուսաւորչի Աջն ի Սիս». երկրորդն ասում է «գրեցաւ Ս. Աւետարանս ի թուին Հայոց ՊՁԸ. . . ի վանս որ կոչի Արգելան . . . ի Հայրապետութեան Լուսաւորչին, քանզի յայսմ ամի վերացեալ եղև Աջն ի Սսոյ, և ոչ գիտեմք զի՞նչ եղև *։» Այդ թուականին Սսի աթոռի վերայ, երևի, կաթուղիկոս չկար։ Գրիգոր Մուսաբէկեանց դեռ չէր նստել, իսկ նախորդներն արդէն անկարգ էին։ Ս. Լուսաւորչի Աջի գողանալն յիշւումէ և յետագայ տարիների յիշատակարաններում. նոցա մէջ հետաքրքիրն է 1441-ին գրուած հետևեալ նկատողութիւնը։ «ի թուին Հայոց մեծացն ՊՂ. յամսեանն մարտի . . . ի Հայրապե-

* Առաք. Դաւր. Լ. Նստարք Հայոց, 118.